

ԱՐԱՏՈՍ ՍՈՒԱՑՈՒ ΔΙΟΣΗΜΕΙΑ ԶԵԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԵՑՅԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բանասիր. դիտ. դոկտոր Դ. Վ. ԱՐԳԱՐՅԱՆ

76 տարի առաջ Հ. Թորոսյանը ապացուցեց, որ Անանիա Շիրակացուն վերագրվող «Յաղագս ամպոց և նշանաց» (այսուհետև՝ «Յաղագս նշանաց») երկում որպես աղբյուր օգտագործված է Բարսեղ Կեսարացու «Վեցօրյա ճառերի» հայերեն թարգմանությունը¹։ Հ. Բարթիկյանը 1964 թ. հրապարակեց մի հոդված, որով Շիրակացուն վերագրվող երկի հեղինակ համարեց Արատոս Սոլացուն²։ Մենք 1971 թ. ցույց տվեցինք, որ այս թյուրիմացության պատճառն այն է, որ Բարթիկյանին հայտնի չի եղել, որ հայերեն օգերևութաբանական երկն ստեղծվել է Արատոս Սոլացուց առնվազն 800 տարի հետո³։

Բարթիկյանը չընդունելով մեր ճշտումը, այժմ հանդես է եկել մի նոր, հոդվածով⁴, որպեսզի հայտարարի, թե «Դ. Աբգարյանի հոդվածը մաղաչափ անգամ չի սասանել Յաղագս ամպոց և նշանացը Արատոս Սոլացու երկի թարգմանությունը լինելու մասին մեր համոզմունքը» և թե՝ «մեր ներկա հոդվածում այդ իրողությունը ուրպես աֆսիումա (ընդգծումը մերն է— Դ. Ա.) պիտի ունենանք։ Ընթերցողին էլ հնարավոր թյուրիմացություններից հեռու պահելու նպատակով, այնուամենայնիվ, բերենք Դ. Աբգարյանի պահանջած ոչ թե մի քանի տողի թարգմանությունը... այլ՝ մի ամբողջ տասնյակ հատվածներ»⁵։ Եվ նա բերում է ուղիղ 13 հատված, որոնց քննությունը մենք կրսկրեսներ քիչ հետո։ Իսկ մինչ այդ ասենք հետևյալը։

Նախորդ հոդվածում մենք ցույց ենք տվել «Յաղագս նշանացի» բազմաթիվ հատվածներ, որոնց բովանդակությունը չի համապատասխանում Արատոսի բանաստեղծությանը։ Բարթիկյանը սրանց ուսումնասիրությամբ զբաղվելու փոխարեն՝ «Յաղագս նշանացի» 78 նշաններից ջոկել է ընդամենը 13 նշան, որոնց բովանդակությունը նման է Արատոսին։ Նա կարող էր այդ 13-ին ավելացնել դարձյալ մի քանի նշաններ, բայց մի՞թե դրանց ցուցադրումից հետո դադարում են գոյություն ունենալ մեր նշած տարբերությունները... Իրենց գոյությունը չեն դադարեցնում նաև այն 23 նշանները, որոնք Բարթիկ-

1 Հ. Թորոսյան, Անանիա Շիրակացին և «Արարատ» թերթին մի հավելվածը, «Բազմավեպ», 1896, էջ 220։

2 Հ. Բարթիկյան, Արատոս Սոլացու ΔΙΟΣΗΜΕΙΑ ...աշխատության հին հայերեն թարգմանությունը, «Բանբեր մատենադարանի» № 7, 1964, էջ 331—363, Այսուհետև՝ «Բանբեր» № 7։

3 Դ. Վ. Աբգարյան, Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատության մասին, «Պատմա-բանասիրական հանգես», 1971, № 1, էջ 77։

4 Հ. Մ. Բարթիկյան, Դարձյալ Անանիա Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատության մասին, «Պատմա-բանասիրական հանգես», 1971, № 4, էջ 133—150։

5 Նույն տեղում, էջ 134։

յանն ինքն է տպագրել շղատառով որպես Արատոսի բանաստեղծության մեջ իսկառ բացակայող նշաններ: Պետք էր զբաղվել նաև դրանց ուսումնասիրության մեջ: Իսկ 13 նշանների նմանությունը դարմանալի չէ մանավանդ այն բանից հետո, երբ հենց Բարթիկյանն է արդեն հայտնել այն միտքը, որ հայ և հույն հեղինակները կարող էին ունենալ մի ընդհանուր աղբյուր՝ Եվդոքսոս Կնիդացու գիրքը:

Երկրորդ հոգվածում հոգվածագիրը հրաժարվել է Եվդոքսոսից, բայց իդուր, որովհետև խոսքով հրաժարվելուց հետո էլ իրականում շարունակում են գոյություն ունենալ այն բաղմաթիվ հատվածները, որոնց մասին նա նախորդ հոգվածում բարեխղճորեն գրել է. «Հայերենն ունի բաղմաթիվ առանձին նախադասություններ և հատվածներ, որոնք հունարեն բնագրում չկան... Պարտավոր ենք համարում ընդգծել (մենք նույնպես պարտավոր ենք համարում ընդգծել Բարթիկյանի բարեխղճորեն ընդգծածը — Գ. Ա.) հետևյալ հանգամանքը. Արատոսի սկզբնաղբյուրը՝ Եվդոքսոս Կնիդացու գործը, մեզ չի հասել... Հարց է ծագում. մեր քաղաքացիությունը ուղղակի Եվդոքսոս Կնիդացու երկի քաղաքացիությունը չէ՞ արդյոք» (էջ 359): Սա՛ է այն անխուսափելի վերջին կայանը, որին հասնում է յուրաքանչյուր մասնագետ, ով առիթ է ունենում համեմատելու հունարեն և հայերեն տեքստերը: Բարթիկյանը երկրորդ հոգվածում չի կարողացել ցույց տալ տեղն իր ձեռքով բացահայտած այն «բաղմաթիվ հատվածների, որոնք հունարենում չկան»:

Եվդոքսոսից հրաժարվելուց հետո նա այլևս երբեք չի կարողանալու բացատրել աղբյուրագիտական վնասական նշանակություն ունեցող այն հատվածը, որն ինքը, հունարեն տեքստը ճիշտ չվերծանելով, ներկայացրել է որպես Արատոսի թարգմանություն. «Վասն զի նշանակեն այս ամպ գրանձուրթին ալոց եւ դժուարահալութիւն: Ուրկն ասացի թե մատագոյն լիցի բակն բոլորեալ արեգականն եւ դժուարաճալ — յայտ է թե երիցս անգամ այսպէս ամպ շրջապատեն զարեգակամբն — մեծ ձմերանոյ նշանակք են... Զի եւ այսպիսի ինչ վասն առաելութեան քանձուրթեան ամպոց անհալ լինի քե մատ առ արեգակամբն գնայ...» (347): Մեր ընդգծած տողերից և ոչ մեկը Արատոսը չունի (համտ. տող 142—152): Պատճառը պարզ է. հայ հեղինակը Եվդոքսոսին հարադատության թարգմանելով՝ կրկնել է նրան, այնինչ Արատոսը Եվդոքսոսին չափածոյի վերածելով՝ աղատ է վարվել և հրաժարվել է մեր ընդգծած տողերից:

Հայ և հույն հեղինակներն այնքան տարբեր ձևով են օգտվել Եվդոքսոսից, որ երբեմն հնարավոր չի լինում որսալ նրանց նմանությունը: Դեռ լավագույն օրինակները մատուցել է Բարթիկյանն ինքը: Այսպես օրինակ, նա հունարեն բնագրում չի գտել և շղատառով է տպագրել «Յաղագս նշանացի» այնպիսի հատվածներ, որոնք իրականում հունարեն բնագիրն ունի: Դրանցից են, օրինակ, 341-րդ էջի («Բանբեր» № 7) երկրորդ և 345-րդ էջի 5-րդ ու 7-րդ պարբերությունները, որոնց համապատասխանում են հունարեն բնագրում 53—55, 104—105, 113—115 տողերը մասամբ:

Միևնույն աղբյուրի նկատմամբ հայ օղերևութաբանի և Արատոսի ցուցաբերած տարբեր վերաբերմունքի պերճախոս վկա է հատկապես հետևյալ հատվածը. «Յորմամ երկրի կամ կղզոյ ծայրք դիմաք ի ծովակողմն են եւ քան զինքեանս վերագոյն ամպ ունին՝ խառնակ հողմ նշանակեն»: Արատոսի բանաստեղծության մեջ սրան համապատասխանում է մի հատված, որը բո-

վանդակությամբ բռնուովին նման չէ հայերենին, սակայն բառապաշարով ցույց է տալիս, որ Արատոսն էլ իր առջև ունեցել է դարձյալ այն միևնույն աղբյուրը (Եվդոքսոս), որն օգտագործել է նաև հայ հեղինակը: Բերենք Արատոսի համապատասխան հատվածը.

Εὐδοκὸς γὰρ εἰησε, καὶ ὅτε πλάττει περὶ πόντου
 φαίνεταί γ' ὡς αἰετὶ νεφελεῖ, πύρ' ὁπλοῖται πυρὶ,
 αἰετ' αὐτὸν πλάττειν παρὰ δὲ βίβλ' αἰετ' (259—261).

Թարգմանենք.

Պարզ է նաև, երբ ծովի վրա լայն
 Ցած ամպ երևա, ոչ բարձր, սակայն,
 Այլ հավի կողքից, որպես քարափն այն՝

Ինչպես տեսնում ենք, սա «Յաղագս նշանացից» այնքան հեռու է, որ բովանդակության ընդհանրությունը առհասարակ չի երևում: Բայց երբ ուշադիր լինում ենք հատվածների բառապաշարը՝ տեսնում ենք, որ զխավոր իմաստ արտահայտող բառերը համընկնում են: Երկու հատվածում էլ կան «ծով» (πόντος), «ամպ» (νεφέλη), «քան զինքեանս վերագուն» (ὡς αἰετ' ὁπλοῖται), «ծովի մոտ գտնվող» «երկրի կամ կղզու ծայր» (πλάττειν): Սրանք Եվդոքսոսի ձեռագրում գտնվել են այնպիսի մի ձևով, որ Արատոսը հասկացել է յուրովի, հայ օգերևութաբանն էլ՝ յուրովի: Եվ այսպես՝ միևնույն աղբյուրից բխելով՝ դարձյալ անճանաչելիորեն հեռացել են միմյանցից Արատոսն ու հայ օգերևութաբանը:

Արատոսը և հայ հեղինակը միմյանցից բացահայտորեն տարբերվում են նաև հետևյալ հատվածներում.

Արատոս.

ἢ πάλιν ὅς: καὶ γνεαί. ὁδρεῖεν ὄνεαρ.
 αὐτόθεν ἐκ ὁδοῦ πατρεῖ βόωσι γυρίων. (214—215).
 Թէ թշվառ ցեղն այդ՝ ջրօձի պարեն,
 Շերեփկաց հայրերն այդ՝ ջրից ձայնեն...

Արատոսն այստեղ «գորտեր» ասելու փոխարեն ասում է «շերեփուկներ»-ի հայրեր», շերեփուկներին էլ կոչում է «ջրային օձի պարեն» (կերակուր) և ապա կարեկցաբար կոչում է «թշվառ ցեղ»: Սրանք զուտ բանաստեղծական զեղումներ են, որոնցից համարյա բան չի հասկացվում: Դրանց փոխարեն հայ հեղինակն ունեցել է Եվդոքսոսի այն հստակ հատվածը, որը և թարգմանել է այսպես. «Յորժամ գորտք առ միմեանս ժողովին և կոչեն՝ զյուզմունս ամպոց նշանակեն: Եւ են գորտք որ կոչին գիւղնիոսք ճշմարտեն առաւել զժամանակս. եւ այնպէս մանրիկք են՝ մինչ տըղկունք կտեն զնոսայ»:

6 Պարզ եղանակ կլինի նաև այն ժամանակ, երբ ցածրիկ ամպը ծովի մի կողմում սեղմվի այնպես, ինչպես քարափն է հավում ծովին (այսինքն՝ բաց ծովի մի կողմում գոյացած ցածր ամպը ծովափի տպավորություն է թողնում):

Մեկնաբանությունն ավելորդ է: Միայն ավելացնենք, որ Արատոսի տողերը գտնվում են բանաստեղծության այն բաժնում, որտեղ պատմվում է անձրևի մասին, իսկ «Յաղագս նշանացում», ինչպես տեսնում ենք, «զյուզմունս ամպոց նշանակեն»: Սա նույնպես երկու երկերի տարբերությունը մատնանշող որոշակի փաստ է:

Իարձյալ մի հատված.

«Յորժամ սկիզբն գիշերոյ լինի և ամպ երևի նման գզաթոյ՝ զխռովութիւն աւոյց նշանակէ»:

Արատոսն ունի.

πολλὰχι ὁ' ἐργασίων ὕετων νέφεα προπαροίμεν
οἷα μάλιστα ποικίλιν εἰσέχοντα ἰνδάλονταί· (206—207).

Սմպերն են հաճախ անձրևից առաջ

Բսկ և իսկ կարծես գզաթ երևում:

Արատոսի և հայ հեղինակի տարբերությունը դարձյալ անձրևի և ամպերի հուզման մեջ է: Այս անգամ ավելանում է նաև «սկիզբն գիշերոյ լինի» արտահայտությունը, որը նույնպես գալիս է Եվդոքսոսից, որովհետև Արատոսը չունի:

Այսպես անընդհատ կարելի է բերել ու բերել Արատոսի բոլոր տողերը և ամեն քայլափոխի ցույց տալ «Յաղագս նշանացի» տարբերությունները: Բայց խնայենք տեղը և այսուհետև բավականանք միայն Բարթիկյանի ջոկած 13 հատվածների («աբսիոմաների») քննությամբ: (Բարթիկյանի երկրորդ հոդվածի տիտղոսի փոխարեն այսուհետև փակագծերում կնշենք միայն էջահամարները):

Առաջին (էջ 134—135):

Արատոսը գրում է.

λεπτή μὲν χαίτην τε περὶ τριτὸν ἤμαρ εἶοντα
εὐδύνει· κ' εἰη. λεπτὴ δὲ καὶ εἰ μάλ' ἐρσειήτης.
πνευματική. (51—53).

Բարթիկյանի թարգմանածից ստացվել է սա.

«Երբ երեք օրվա լուսինը բարակ է ու հստակ,
օդը պարզ է լինելու: Եթե բարակ է և շատ կարմիր,
հողմային է լինելու»:

Սրան համապատասխանող միջավայրը «Յաղագս նշանացում» հետևյալն է.

«Յորժամ Գ. աւրեայ երևի լուսինն եւ եղջերֆն վերածգեալ եւ յստակ եւ սուրբ լինի՝ նշանակէ զաւղ պարզութեան. ապա թէ սուրբ են եղջերքն և շիկագոյն՝ հողմային նշանակեն. վասն խառնուածոյ սեաւ թանձր ամպոյն ի հայելիս պայծառութեան լուսոյն՝ շիկագոյն եւրի»⁷:

Ընդգծված տողերը բացակայում են Արատոսի բանաստեղծությունից: Կնշանակի՝ հայ թարգմանիչն իր առջև ունեցել է մեկ ուրիշ աղբյուր: Այդ

7 Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 304: Այսուհետև՝ Անանիա Շիրակացի:

աղբյուրը Եվդոքսոս Կնիդացու երկն է, որից հայ գիտնականը քաղել է մեր ընդգծած տողերը: Բարթիկյանը «Յաղագս նշանացից» պոկել ու ցույց է տվել միայն այն մասը, որը նման է Արատոսին, իսկ բուն աղբյուրից եկող մասը ցույց չի տվել:

Երկրորդ (էջ 135):

Արատոսը գրում է.

εἰ δὲ κ' ἀπ' ἀμφοτέρων κερᾶων, τρίτον ἤμαρ ἀγούσα
μῆτ' ἐπινεύσασσῃ, μεῖν' ὑπτιόωσα φασινῃ,
ἀλλ' ὀρθᾶς ἐχάτερον περὶ γναμπτουσα κερᾶια,
ἐσπερίοι κ' ἀνεμοὶ καίνον μετὰ νόχτα φερόντων.
εἰ δ' αὖτις ὀρθῇ καὶ τετρατὸν ἤμαρ ἀγίνοι.
ἢ τ' ἂν χεῖμονος συνάγειρομένους διδάσκει (56—61).

Բարթիկյանը թարգմանել է այսպես.

Երբ երեք օրվա լուսնի եղջյուրները
ոչ ներս են խոնարհված, ոչ էլ դուրս կորացած,
այլ՝ երկուսն էլ ուղիղ են և կանգուն,
այդ գիշերից հետո արևմուտքից քամիներ են փչելու:
Երբ չորրորդ օրն էլ այդպես կանգուն լինեն եղջյուրները՝
դա խիստ եղանակի նշան է:

«Յաղագս նշանացի» համապատասխան տեղն է՝

«Յորժամ Դ. արեայ է լուսինն եւ եղջերքն ոչ ի ներքս խոնարհեալ եւ չչ յողնեալ արտաքս, այդ կանգուն վերածգեալ՝ հողմոյ նշանակ է. վասն որոյ ի սկզբանէ կանգնին եղջերքն վերածգեալ յաւղոցն. որպէս երեւի թէ յաւղոցն ձգի ի վեր, ոչ թեքն հողմոյ նշան, այդ սեւաթոյր հողմոյ նշան, որ է հիւսիսային եւ լիւբեացի: Ապա թե ի չորրորդումն նորին նման երեւին եղջերքն՝ առավել նշանակէ դաւդոց սաստկութիւն. զի վասն ուժգնութեան աւղոյն եւ ի Դ. աւուրն կանգուն երեւին եղջերքն»⁸:

Մեր ընդգծած բոլոր տողերը Բարթիկյանը դարձյալ, առանց որեւէ ծանոթագրության, կրճատել է, որովհետեւ հունարեն բնագրում սբանց համապատասխանող ոչ մի տող չկա: Եթե հողվածագիրն այդ տողերը չէր ճատեր՝ կբացահայտվեր իր տեսակետի սխալ լինելը, ինչպես նաև կպարզվեր աղբյուրագիտական նշանակություն ունեցող այն փաստը, որ Արատոսը խոսում է արևմտյան, իսկ հայ հեղինակը՝ հյուսիսային քամիների մասին: Երկրի կողմերի այս տարբերությունը «Յաղագս նշանացում» սխտեմ է կազմում և բխում է դարձյալ սկզբնաղբյուրից:

Անցնենք մյուս հատվածներին, սակայն այս անգամ տեղ խնայելու համար՝ այլևս չբերենք հունարեն և հայերեն քաղվածքները, այլ նշենք նրանց էական տարբերությունները:

Երրորդ (էջ 135):

Թարգմանված է Արատոսից 3 տող (64—66-րդ): Այս տողերին նախորդող մի ամբողջական օգերևութաբանական նշան Արատոսը չունի: Այդ նշանը.

⁸ Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, էջ 304:

Բարթիկյանի հողվածում դարձյալ ցույց չի տրված: Այսպիսով՝ երրորդ «արսիոման» նույնպես հողվածագիրն ստացել է շրջապատից մեկուսացված վիճակում, ուստի և մերժելի է:

Չորրորդ (էջ 136):

Թարգմանված են Արատոսի 160—162 և 165—169 տողերը: Եթե մինչև այժմ հողվածագիրն աչ ու ձախ անդամահատում և կիսատ էր ներկայացնում հայերեն բնագիրը, ապա այժմ նա անցել է նաև հունարեն բնագրի վերահամայնը: Կրճատել է Արատոսի 163—164 տողերը, որովհետև դրանց համապատասխան բան չի գտել «Յաղագս նշանացում»:

Բերենք նրա կրճատած տողերը.

αὐτὸς τε πάλιν ἀπύρροι, οὐτὲ μάλ' ἐγγύς,
ἀλλ' ὅσους τε μάλιστα πύγουσιον ὀησασθαι (163—164),
Աստղերը, որոնք ոչ շատ հեռացած, ոչ էլ մոտ են շատ,
Այլ ճիշտ այնքան են, որքան չափում է կանգունը աղատ⁹:

Այս անգամ նույնպես բնագրերը տարբեր են նույնիսկ չկրճատված մասում. հունարենն ունի՝ «մեկը հյուսիսում», իսկ հայերենը՝ «և մի յարևմտից»: Սա հենց մեր նշած սիստեմ կազմող տարբերությունն է:

Հինգերորդ (էջ 136):

Թարգմանված են Արատոսի 210—213 տողերը: Հունարենն ունի անձրևի, իսկ հայերենը՝ ամպերի հուղման նշանները: Ինչպես տեսնում ենք, այս կարգի տարբերությունները նույնպես սիստեմ են կազմում: Բացի այդ, ըստ հունարենի՝ ծիծեռնակները ջրին խփում են փորով, իսկ ըստ հայերենի՝ քներով: Հունարենը չունի նաև հայերենի «որպէս թե հարթ ջրոյն լինիցին» պատկերը, որը Բարթիկյանը դարձյալ կրճատել է և ցույց չի տվել ընթերցողին:

Վեցերորդ (էջ 137):

Թարգմանված են Արատոսի 222—223 տողերը: Մենք արդեն ցույց ենք տվել (էջ 81), որ հայերենի «զլխամբարձ» բառն արձագանքելով Թեոփրաստեսի «զլուխը դեպի երկինք» արտահայտությանը՝ բացահայտում է հայերենի տարբերությունը Արատոսից:

Յոթերորդ (էջ 137):

Թարգմանված են Արատոսի 238—239 տողերը: Հունարենն ունի 2 թռչուն (բադ, ճայակ), հայերենը՝ 3 («ընտանի հաւք և ասղակտուցք և ձկնքաղք»): Հունարենում թռչունները գուշակում են դարձյալ անձրև, հայերենում՝ «յուզմունս ամպոց»:

Ութերորդ (էջ 137):

Բերված են Արատոսի 232 և 240-րդ տողերը, սակայն թարգմանված է միայն 240-րդը, իսկ 232-րդը չի թարգմանված, որովհետև նախ՝ դրան հա-

⁹ «աղատ» բառը հունարենը չունի:

մապատասխան տող չկա «Յաղագս նշանացում» և երկրորդ՝ այդ տողում կա Διός *μῦθος* (Ὀδυσσ. ἐργασίας Διός παρὰ στυμ' ἐγέγονε). որը Բարթիկյանը չի վերծանել¹⁰:

Զևսի անունը պատկանում է հունարենի երրորդ հոլովման ընդհանուր կանոններին չենթարկվող բառերի շարքին և սեռական հոլովում տեսքը բոլորովին փոխելով դառնում է Διός: 167-րդ տողում գտնվող միևնույն Διός-ը Բարթիկյանը դարձյալ չի թարգմանել (էջ 136): Այնպես որ Բարթիկյանի հոգվածի 148-րդ էջի առաջին կեսում և նույն էջի 10-րդ ծանոթագրության մեջ ասվածները պետք է հասցեագրել իրեն:

Խններոդ (էջ 137):

Բարթիկյանը թարգմանել է Արատոսի 242—243 տողերը, որով դարձյալ իր ձեռքով ապացուցել է, որ «Յաղագս նշանացի» հեղինակը ծանոթ չի եղել Արատոսին: Վերջինս ձանձի խայթոցը դիտում է որպես անձրևի նշան, իսկ «Յաղագս նշանացի» համաձայն՝ դարձյալ «զյուզմունս ամպոց նշանակէ»:

Տասներորդ (էջ 138):

Թարգմանված են Արատոսի 251—252-րդ տողերը, որոնք արտաքին տեսքով նման են «Յաղագս նշանացի» տողերից մեկին: Բայց իրականում նրանք ավելի մոտենում են «Գեոպոնիկայի» («Գիրք վաստակոց») համապատասխան նշանին: Ինչպես «Յաղագս նշանացում», այնպես էլ «Գեոպոնիկայի» հունարեն բնագրում բացակայում է Արատոսի գործածած «ἄρ᾽ ἄρ᾽ ἄρ᾽» («Կրակի վրա դրված եռոտանի կաթսա») արտահայտությունը: Հայերեն երկում բացակայելը դարմանալի չէ, բայց երբ դա բացակայում է նաև «Գեոպոնիկայի» հունարեն բնագրում, այն էլ՝ այն բնագրում, որի վերնագրի մեջ գրված է հենց Արատոսի անունը («Ἀράτος»), այս դեպքում «Յաղագս նշանացի» և «Գեոպոնիկայի» միասին հեռանալը Արատոսից՝ ստանում է աղբյուրագիտական որոշակի նշանակություն:

Բարթիկյանն այս կարգի բնագրագիտական նրբությունները չնկատելով՝ այսպես է ընկալել մեր նկատածը. «Իր տեսակետը հաստատելու համար Գ. Աբգարյանը նշում է «Յաղագս նշանացի» նմանությունը «Գեոպոնիկայի» հին հայերեն թարգմանության մի շարք տեղերի հետ, չիմանալով (ընդգծումները մերն են—Գ. Ա.), որ «Գեոպոնիկայի» հունարեն բնագրում ասված է, որ ներանց (գիրք 1, գլ. 2 և 3) հեղինակը Արատոսն է («Գեոպոնիկայի» ճին հայերեն քաղվածքում մեջ Արատոսի անունը չի վկայակոչված», 149): Սույն հայտարարությունն անելուց առաջ նա պետք է ուսումնասիրեր «Գեոպոնիկայի» հունարեն բնագրին վերաբերող գիտական գրականությունը, այնինչ նա ծանոթ է միայն «Գեոպոնիկայի» ռուսերեն թարգմանության առաջաբանին, իսկ այստեղ Արատոսի անունը պարունակող հատվածները չեն բննարկված: Եթե քննարկված լինեին՝ հոգվածագրին հայտնի կդառնար այն

¹⁰ Զևսի անունից է ծագում նաև հենց Διοσκληρία բառը, որը թարգմանվում է առանց Զևսի անվան: Նման դեպքերը շատ են: Բայց դրանք չպետք է շփոթվեն մանավանդ 232-րդ տողի հետ, որտեղ Διός բառն ունի Արատոսի բանաստեղծությունը բնորոշող բառի նշանակություն և պետք է անպայման ներկայացվեր ընթերցողին: Այդպես է վարվել, օրինակ, Արատոսի՝ Բարթիկյանին անծանոթ մնացած 1955 թ. լոնդոնյան հրատարակության թարգմանիչը, S. Aratus, with an English Transl. by G. R. Mair, M. A. London, 1955, էջ 283:

Ճշմարտությունը, որ «Գեոպոնիկայի» հունարեն բնագրում Արատոսի անունը կրող հատվածները քաղված են ոչ թե Արատոսից, այլ ուրիշներից:

Անծանոթ լինելով այս փաստին, նա հաղթականորեն բացականչել է. «Ահա այս բոլորից հետո չենք կարող հաշվի առնել Գ. Աբգարյանի... հիմնադրվ հայտարարությունը» (143): Ապա՝ իր «հիմնադրվ» հիմքի վրա կանգնած՝ նա եռանդով քանդում է Աբգարյանի շենքը. «Ահա այստեղ է, որ Աբգարյանի դժվարությամբ կառուցած ողջ շենքը փուլ է գալու իր իսկ առաջ քաշած կռվանի հարվածների տակ» (141): Ծիշտ այսպես նա «փուլ է տվել» նաև Փիլոն Տիրակացու շենքը: Վկայակոչելով հույն մատենագիր Հիպպոլիտոսի ելկը, որի հետ Տիրակացին ոչ մի կապ չունի, նա գրում է. «Հունարեն բնագրի Տարսարչ-ը հայերեն թարգմանության մեջ «Կեսարանացիք» ձևով է: Ամենայն հավանականությամբ հայերենի առաջին կե-ն դա հունարեն չալկապն է (արտասանվում է «կե»), որ թարգմանիչը կցել է Տարսարչ տեղանվան: Նման բնույթի թարգմանական սխալների օրինակներ կարելի է բաղմապատկել, բայց վերոբերյալն էլ բավական են համոզելու, որ... Փիլոն Տիրակացու համար... այդ կարգի սխալները բնականոն են»¹¹: Ընթերցողի մտքից անգամ չի կարող անցնել, որ Հիպպոլիտոսի երկի մասին այսպես լուրջ և այսպես «հեղինակավոր» կարծիք հայտնող մեր հարգելի ընդդիմախոսը նույնիսկ չի էլ տեսել հույն մատենագրի երկը և Տարսարչ բառը վկայակոչել է ոչ թե այդ երկից, այլ Հիպպոլիտոսին օգտագործած մեկ ուրիշ հեղինակի երկից: Նրան հայտնի չէ, որ Հիպպոլիտոսին վերագրվող երկը հայտնաբերվել և հրատարակվել է դեռևս 1929 թ.: Եթե այս մասին նա իմանար՝ բաց կաներ Հիպպոլիտոսի անվամբ տպագրված աղբյուրը և կտեսներ, որ հայ հեղինակը խախտելի նշգրտությամբ է քաղմանել իր ձեռքին եղած հունարեն ձեռագիրը: Այս ձեռագրում գրված է Καίσαρναε¹² և հայ թարգմանիչը թարգմանել է «Կեսարանացիք»: Նախանձելի նշգրտություն:

Տասնմեկերորդ (էջ 146):

Բարթիկյանը թարգմանել է Արատոսի 267—269-րդ տողերը, որոնք լիովին համապատասխանում են «Յաղագս նշանացի» համապատասխան տեղին: Սակայն մենք արդեն ցույց ենք տվել, որ այս տողերից ընդամենը 5 տող վերև գտնվող և «երկրի կամ կղզույ ծայրք» արտահայտությունը պարունակող նշանը Արատոսից չի քաղված, հետևաբար միևնույն միջավայրում գտնվող 267—269 տողերի նմանությունը պետք է վերագրել այն աղբյուրին, որտեղից քաղված է երկրի կամ կղզու ծայրերին վերաբերող օգերևութաբանական նշանը:

Տասներկուերորդ (էջ 146—147):

Թարգմանված են Արատոսի 350—353-րդ տողերը, որոնց համապատասխանում է «Յաղագս նշանացի» հետևյալ կետը. «Յորժամ արջառ և այլ անասունք զերկիր փորեն՝ ղղէմս ի հարաւ արարեալ՝ ձմեռ նշանակէ»: Սրա փոխարեն Արատոսն ունի մի բարձրավեստ բանաստեղծություն, որի մեջ բա-

¹¹ Զ. Բարթիկյան, Անանիա Տիրակացուն վերագրվող «Ժամանակագրության» և նրա բանաբանի վարդի շուրջը, «Բաների մատենադարանի», N: 8, էջ 75—76:

¹² Hippolytus, Leipzig, 1929, էջ 87:

նաստեղծն ստեղծել է հետևյալ գեղեցիկ պատկերը. ծանր բեռնավորված աշուն է, փշում է հյուսիսային քամին և հեռվից իջնում ևն Պլեյադներ¹³ կոչվող առասպելական քույրերը՝ ավետելով ձմռան մոտեցումը: «Յաղագս նշանացում» սրա հետքն անգամ չկա: Կարող էինք մտածել, թե հայ գիտնականը սրանք ավելորդ համարելով՝ կրճատել է, սակայն դրան խանգարում են մյուս տարբերությունները: Արատոսը խոսում է հյուսիսային քամիների մասին, իսկ հայ հեղինակը նրանց մասին ոչինչ չգիտե: Բացի այդ, ըստ Արատոսի՝ ձմեռը գուշակող կենդանիները զլուխները թեքում են դեպի հյուսիս, իսկ ըստ «Յաղագս նշանացի»՝ հաճախ: Ուրեմն երկու հատվածների արտաքին նմանությունից զրեթե բան չմնաց:

Տասներեփեռոդ (էջ 147):

Թարգմանված են Արատոսի 403—404 տողերը:

Արտաքուստ ամեն ինչ կարգին է: Սակայն նկատում ենք մի փոքր մանրամաս, որը որոշակի նշանակություն է ստանում այս դեպքում:

Արատոսի 403—404 տողերին և «Յաղագս նշանացին» միմյանցից տարբերում է «եփու ոտֆու» արտահայտությունը: Արատոսը հայտնում է, որ շունը վատ եղանակ գուշակելով՝ սկսում է երկու ոտքով փորել գետինը: Ո՞ւմ հասկանալի չէ, որ շունը չի կարող միաժամանակ բոլոր չորս ոտքերով գետինը փորել և պետք է հենվի երկու ոտքերի վրա, որպեսզի մյուս երկուսով փորի: Արատոսն իր բանաստեղծության տաղաչափությունն ապահովելու համար Եվդոքսոսի գրածին ավելացրել է «երկու ոտքով» ավելորդ արտահայտությունը, իսկ հայ հեղինակը հարազատ է մնացել Եվդոքսոսին և զերծ է այդ թերությունից: Թեոփրաստեսը նույնպես շունի այդ անհաջող արտահայտությունը: Իսկ Արատոսից օգտված մեկնիչներից մեկը գրում է. «առջևի ոտքերով» (Voss, 205): Այսպիսով՝ քննարկվող արտահայտությունն սկսվում է Արատոսից և շարունակվում է նրա մեկնիչների երկերում: Այս միջավայրից դուրս գտնվող մյուս երկերում նրա հետքը չկա:

• • •

Ավարտեցինք բոլոր 13 հատվածների քննարկումը:

Այսպիսով՝ «Յաղագս նշանացի» 78 նշաններից 50-ը արդեն քննարկված են (21-ը քննարկել ենք սույն հոդվածում, 9-ը՝ նախորդ հոդվածում, իսկ 20-ը Բարթիկյանն ինքն է շղատառով տպել որպես հունարեն բնագրում բացակայող նշաններ): Համակողմանի քննարկումը ցույց տվեց, որ Բարթիկյանը արտաքին տպավորություններով է առաջնորդվել, երբ «Յաղագս նշանացը» համարել է Արատոսի թարգմանությունը: Այս թյուրիմացության հիմնական պատճառը, ինչպես ասվեց, այն է, որ հոդվածագիրը չի իմացել Հ. Թորոսյանի ուսումնասիրության մասին: Այժմ իմանալուց հետո նա գրում է. «Հասկանալի չէ, ինչի դեմ է առարկում Աբգարյանը: Թորոսյանը ցույց է տվել, որ «Յաղագս ամպոց և նշանացը» ստեղծվել է V դարից հետո: Իսկ մենք տարբեր բան ասել ենք» (139): Այո, ասվել է. ասվել է, որ «Յաղագս նշանացը» ըստեղծվել է Հ. Թորոսյանի ասածից 800 տարի առաջ: Այժմ իդուր փորձ է ար-

¹³ Արատոսը նկատի է ունեցել Բազմաստեղք (Յոթնեղբարք) կոչվող աստղախումբը Յուլի համաստեղության մեջ:

վում ապակողմնորոշել ընթերցողին, գրելով. «Մենք Յաղագս ամպոց և նշանացի հունարեն բնագիրն ենք վերագրել Արատոս Սուացուն (սա վերագրելու բան չէ, ամբողջ աշխարհը գիտե, որ հունարեն բնագիրը Արատոսինն է— Գ. Ա.) և ոչ նրա մեկ հաղարամյակ անց կատարված հայերեն քաղամանությունը» (139):

Փորձ չի արված բացատրելու, թե այդ ինչպե՞ս է, որ Արատոսի «հայերեն թարգմանության» մեջ կա Արատոսից 500 տարի հետո ապրած Բարսեղ Կեսարացու գրածը: Սա բացատրել անհնարին է, որովհետև Կեսարացու հատվածներն այնպես են հյուսված «Յաղագս նշանացի» մյուս հատվածների հետ, որ այդ հյուսվածքը քանդել անհնարին է: Դրա համար էլ ուրիշ ելք չգտնելով, նա հինգ անգամ (էջ 139, 140, 143) հայտարարել է, թե Կեսարացու հատվածներն ընդմիջարկություն են: Հինգ անգամից զոնե մեկ անգամը Բարթիկյանը չի տրամադրել իր հայտարարությունը հիմնավորելուն: Ընդհակառակը, ավելի առաջ գնալով՝ հայտարարել է. «Բայց դեռ հարց է, թե այդ 6 կետի հեղինակը Բարսեղ Կեսարացին է» (140):

Բոլորովին անհարկի Բարթիկյանը վերավորում է Հ. Խորոսյանին, որի աշխատությունը «Յաղագս նշանացի» աղբյուրներին նվիրված լավագույն ուսումնասիրությունն է: Բարթիկյանը գրում է. «Հ. Խորոսյանի անհիմն ու սխալ ենթադրությունը» (139): Մասնագետն ինչպե՞ս կարող է թույլ տալ իրեն՝ «անհիմն ու սխալ» հայտարարել գիտական այն մեծ նվաճումը, որով ձգարտում մտցվեց «Յաղագս նշանացի» աղբյուրների վերաբերյալ գոյություն ունեցող սխալ տեղեկության մեջ: Խորոսյանը գրել է, որ «Յաղագս նշանացը» ուրիշ բան չէ, բայց եթե հավաքում մի այլևայլ օղային երևույթից կամ գուշակությանց, թարգմանյալ հայլեայլ գրոց» («Բաղմավեպ», 1896, էջ 220): Սա այնքան անառարկելի մի ձեմարտություն է, որը հերքելու համար Բարթիկյանը չի կարող գտնել ոչ մի փաստ:

Հ. Բարթիկյանը այնպես արագ է կարդացել մեր հոդվածը, որ չի տեսել նույնիսկ հենց հոդվածն սկսող այն հայտարարությունը, որ Յաղագս նշանացը «հրատարակվել ու հայտնի է դարձել որպես Անանիա Շիրակացու քաղամանական (ընդգծում ենք՝ քաղամանական— Գ. Ա.) աշխատություն... նրա հայտնաբերողն ու հրատարակողը Գալուստ Տեր Մկրտչյանն է» (էջ 77): Այս հայտարարության առկայության դեպքում վայել էր գրել, թե «նա (Աբղարյանը), առանց անունը տալու, կրկնում է պարզապես Գալուստ Տեր Մկրտչյանի կարծիքը» (133): Զէ՞ որ մենք Գալուստ Տեր Մկրտչյանի անունը ոչ միայն տվել ենք, այլև գրել ենք մեր հոդվածի սկզբում: Մաշտոցի անվան Մատենադարանի № 1973 ձեռագրում մենք հայտնաբերել ենք «Յաղագս նշանացի» հիմնական աղբյուրի՝ Եվդոքսոսի (կամ՝ Բարթիկյանի ասելով՝ Արատոսի) հունարեն բնագրի հին հայերեն ամբողջական քաղամանության հետքեր, իսկ նա երեք հատված քաղելով մեր իսկ հայտնաբերած բնագրից, գրել է. «Բերենք № 1973 ձեռագրից երեք օրինակ՝ սկզբից, մեջտեղից, վերջից» (146)¹⁴:

¹⁴ № 1973 ձեռագրի տարրեր մասերում կան օգերևութարանական զանազան նշաններ: Իրանց մեջ մենք հայտնաբերել ենք Բարթիկյանի սկզբից, մեջտեղից, վերջից՝ քաղած հատվածները և բացահայտ հայտարարել ենք, որ այդ «կտրած մասից մնացած մի շարժ օգերևութարանական նշաններից» 14-ը քաղում և ներկայացնում ենք ընթերցողին առայժմ՝ որպես նմուշ: Մյուս նշանները մտադիր ենք հրապարակել այն ձգարիտ բնագրի հետ, որի մասին հայտնել ենք մեր նախորդ հոդվածի 91-րդ էջում:

Ճիշտ է, Եվդոքսոսի երկը մեղ չի հասել և մեր խոսքը կարող է աննյութի թվալ: Բայց դա միայն՝ առաջին հայացքից և միայն անտեղյակ ընթերցողին: Իրականում Եվդոքսոսը կա Արատոսի մեջ: Հայտնի է, որ նույնիսկ Սիմեոն Ասլարանցու հույժ հակիրճ համառոտագրության միջոցով մենք վերականգնում ենք Սեբեոսի «Պատմության» մեղ չհասած ձեռագրի բառերը, կոահում ենք անգամ ընկած թերթերի մասին: Գիտությունը ընդունակ է նման միջոցների օգնությամբ հասնել ճշմարտությանը: Այդպես էլ՝ կարող ենք Արատոսի միջոցով իմանալ Եվդոքսոսի մասին: Արատոսի բանաստեղծության մեջ նյութերի հաջորդականությունն այնպիսին է, որ խախտելն անիմաստ կլիներ: Այստեղ կանոնավոր կերպով դասավորված են սկզբում լուսնի, ապա՝ արևի, աստղերի, կայծակի, գիշերվա, ծիածանի, կենդանիների միջոցով գուշակվող նշանները¹⁵:

Բարթիկյանը գրում է. «Աբգարյանը չի բացատրում. ի՞նչ հրաշքով այդ զանազան թարգմանություններից, զանազան հեղինակներից քաղված նյութերի հավաքածուն կամ ժողովածուն և՛ նյութի շարադրման հերթականությամբ, և՛ բովանդակությամբ համապատասխանեց Արատոս Սուլացու երկին» (139): Այնինչ մենք Սուլացու երկին համապատասխան ենք համարել ոչ թե զանազան հեղինակներից քաղված նյութերի հավաքածուն, այլ միայն ու միայն Եվդոքսոսից քաղված հատվածները: Ուրեմն ինչու է մեր ընդգիմախոսը սխալ կողմնորոշում ընթերցողին:

«Ստացվում է, որ,— գրում է Բարթիկյանը,— որևէ երկի թարգմանիչը որոշելու գործում կարևորը այդ երկի համար «առավել հարմար» թարգմանիչ փնտրել-գտնելն է և ոչ՝ այդ երկի բազմակողմանի ուսումնասիրությունը» (144): Պարզ երևում է, որ նրա ուշադրությունից վրիպել է մեր հոգվածի 89-րդ էջում հայտնված այն միտքը, որ Շիրակացու «աշխատություններում ոչ մի հետք չկա «Յաղագս նշանացում» հավաքված օգերևութաբանական նշաններից»: Եթե գրել ենք «ոչ մի հետք չկա»՝ կնշանակի կատարել ենք ոչ միայն «այդ երկի («Յաղագս նշանացի» — Գ. Ա.) բազմակողմանի ուսումնասիրությունը», այլև՝ տող առ տող, բառ առ բառ ստուգել ենք Շիրակացու ամբողջ մատենագրությունը և միայն դրանից հետո ենք գրել «ոչ մի հետք չկա»:

Արատոսի բանաստեղծությունն ունի այլևայլ լեզուներով տասնյակ հրատարակություններ. մենք գտնում ենք, որ Բարթիկյանի հրատարակությունն ավելորդ է, որովհետև համար է: Իսկ Բարթիկյանը զարմանում է. «Զարմանալի է, ինչու 40-րդ հրատարակությունը օգուտ է բերել... իսկ 41-րդ հրատարակությունն արդեն օգուտ չի բերում» (147): Զարմանալու բան չկա. 40-րդ հրատարակությունը օգուտ է բերել համապատասխան միջավայրում և օգուտ կբերի նաև հազարերորդ հրատարակությունը, իսկ Մատենադարանի «Բանբերում» դա օգուտ չի բերել նույնիսկ մեկ անգամ, որովհետև չի թարգմանվել և չի խոսել հայ ընթերցողի հետ գոնե մեկ տողով:

¹⁵ Արատոսը միայն որոշ դեպքերում, շեղվել է կանոնից: Այսպես, օրինակ, 191-րդ տողից հետո նա ընդհատում է կենդանիների վերաբերյալ մասը և շարադրում կայծակի, գիշերվա, ծիածանի, աստղի մասին 4 նշանները, որից հետո, սկսած 210-րդ տողից, կրկին կանոնավորում է հերթականությունը: «Յաղագս նշանացը» այս խախտումը չունի, որով մի անգամ ևս ապացուցում է իր անմիջական կապը Եվդոքսոսի հետ:

Օգտավետն ու անօգուտը հողվածագիրը չի կարողացել տարբերել նաև № 1973 ձեռագրի հարցում: Նրա կարծիքով «Յաղագս նշանացը» ճշգրտելու բնագավառում № 1973 ձեռագիրը «որևէ արժեք չի ներկայացնում» (146): Այն-ինչ մենք նշել ենք ուղիղ 10 ճշգրտումներ, որոնց արժանիքը անմատչելի է մնացել Բարթիկյանին: Դրա համար էլ նա գրում է. «Անկասկած է դառնում, որ № 1973 ձեռագրի հիման վրա «Յաղագս ամպոց և նշանացի» «առավել ճշգրտված» հրատարակություն իրականացնել չի կարելի» (146): Ընթերցողը չի կարող չհավատալ արտաքնապես այսքան լուրջ երևացող հայտարարությանը, մանավանդ այն պատճառով, որ հայտարարողը հունարեն բնագրից բերում է մի օրինակ, որին չհավատալը առաջին հայացքից անհնար է: Այսպես՝ № 1973 ձեռագրում գտնվող «այրք» բառի կապակցությամբ մեր ասածը ժխտելու համար նա գրում է. «Հունարեն բնագիրը՝ համապատասխան տեղում ունի *αἰρα*. որ «ծայրք» է նշանակում և ոչ «այրք» (145): Ում մըտքից կանցնի, թե հունարեն բնագրում նման բան չկա: Բայց, արի ու տես, որ Բարթիկյանն այս անգամ էլ է խախտում ընթերցողի հավատը: Բերենք *αἰρα* («ծայրք») բառը պարունակող տողերը Արատոսի բանաստեղծության մեջ.

Εἴ γε μὲν ἡερύεσσα παρῆς ὄρεος μεγαλοῖο
 πύμμενθ' αἰνυγται νεφελεῖ, αἰραὶ δὲ κοῖλαι
 φαίνονται καὶ αἰραί. μέλα καὶ τοῖ' ὀπευδύοτ' εἴγῃ. (256--258):

Թարգմանենք.

Մեծ լեռան ոտքով երբ մութ-ամպ ձգվի
 եվ երբ ծայրերը (*αἰραί*) այդ բարձունքների
 Փայլփլեն հստակ՝ պարզ օր կլինի:

Իսկ «Յաղագս նշանացում» «ծայրք» բառը պարունակող հատվածը հետևյալն է. «Յորժամ երկրի կամ կղզոյ ծայրք դիմաւք ի ծովակողմն են եւ քան զինքեանքս վերագոյն ամպ ունին՝ խառնակ հողմ նշանակեն»:

Ինչպես տեսնում ենք, «Յաղագս նշանացի» «ծայրք» բառը պարունակող հատվածը ոչ մի կապ չունի Արատոսի բանաստեղծության մեջ *αἰρα* («ծայրք») բառը պարունակող հատվածի հետ: Բարթիկյանը սխալվել է, որովհետև Արատոսի լեզուն խրթին է, և, սոսկ հունարեն իմանալը դեռևս բավարար չէ բանաստեղծին հասկանալու համար:

Սխալին նպաստել է նաև գրաբարի ոչ ճիշտ վերծանությունը: Այսպես, «քան զինքեանս վերագոյն ամպ ունին» արտահայտությունը, որ նշանակում է «իրենցից ավելի բարձր ամպ ունեն» Բարթիկյանը հասկացել է այսպես. «իրենց վրա ամպ ունեն» (145): Սա գրաբարի սխալ ընթերցումն է, որովհետև ըստ գրաբարի՝ կղզու ծայրերն ազատ երևում են և ամպերը նրանցից բարձր են, իսկ Բարթիկյանի թարգմանությամբ՝ կղզու ծայրերը կորած են ամպերի մեջ և չեն երևում:

Այսպես ոչ ճիշտ հասկանալով գրաբարը՝ Բարթիկյանը բացականչում է. «Բան ստացվեց» (145): Իհարկե, չստացվեց: «Դրանք ինչպե՞ս են ամպով ծածկվում, պարզ չէ» (145): Ինչու պարզ չէ: Մածկվում են ամպով, որովհետև գրաբարը սխալ է վերծանված: Եթե ճիշտ վերծանվեր՝ ամպով չէին

ծածկվի: Իսկ եթե ամպով չծածկվեն՝ փաստը պայծառ կերևար և Բարթիկյանն այդ փաստը տեսնելով՝ չէր գրի. «Թարգմանական երկերի ճշգրտության չափանիշը նախ և առաջ նրանց բնագիրն է (այո, բնագիրն է, բայց ինչպես տեսանք, այդ բնագիրը սխալ է հասկացված— Գ. Ա.)... Գ. Աբգարյանի առաջարկած «Ճշգրտումները» ինքնանպատակ են, նրանք... պարզ տեղերը մթացնում, խավարեցնում են (ընդհակառակը, տեսանք, որ ինքն է կղզու պարզ ծայրերը ամպերի մեջ խցկել և խավարեցրել— Գ. Ա.), անհասկանալի և իմաստազուրկ դարձնում» (145):

Նա ճիշտ այդպես է խոսում նաև մեր կատարած բառաքնությունների մասին, բայց այս անգամ անկեղծորեն հայտնում է, որ ինքը չգիտե, թե ինչ է բառաքնությունը¹⁶. «Այդ «գործողությունների» միջոցով, որոնք չգիտես ինչու բառաքնություն են որակված, ստանում է կեփիկփ ձևը, որը ինչպես ինքը Աբգարյանն է ցույց տալիս, արդեն կա Մատենադարանի № 1973 ձեռագրում և «Բազմավեպում» հրատարակված հոդվածում» (148): Նա դժվարացել է տարբերել մեր արածը «Բազմավեպի» հոդվածից: Բացատրենք: «Բազմավեպի» հոդվածի հեղինակը քաջ իմանալով № 1973 ձեռագրի կեփիկփ-ի մասին չի կարողացել գտնել հունարեն բառի իրական տառադարձությունը և նույնացրել է չարժիկ կամ օֆից-չիֆ (sic!) ձևի հետ: Բառը աղավաղված ձևով թափանցել է նույնիսկ Հ. Աճառյանի և Ստ. Մալխասյանցի բառարանների մեջ: Իսկ մենք մանրակրկիտ բառաքնությամբ վերականգնել ենք բառի սկզբնական ձևը. «Կրճատվում է հունարեն գրեթե նույնաձայն πρ հնչյուններից մեկը (π-ն), որպես հայերենի համար ավելորդ հնչյուն, երկրորդ՝ մընացած չափ-ին ավելացվում է «-իկ» մասնիկը, երրորդ՝ հունարեն հոգնակի թվի ու վերջավորությունը փոխարինվում է հայերենի «ք» վերջավորությամբ: Ստացվում է «Կեփիկք» (93): Ահա, սա է այն բառաքնությունը, որի կապակցությամբ նա ցանկացել է տպավորություն ստեղծել, թե մեր արածն ինչ-որ չափով արել է նաև ինքը: Նա գրում է. «Անուղղակիորեն իրեն վերագրելով մեր հոդվածում գրվածը» (էջ 148): Այնինչ՝ իր հոդվածում նա նույնիսկ չի էլ կոահել, թե գոյություն ունի «Կեփիկք» ձև, որովհետև նախ նա ծանոթ չի եղել «Բազմավեպի» հոդվածին և երկրորդ՝ այդ բառն առաջին անգամ մենք ենք վերականգնել, հենվելով № 1973 ձեռագրի վրա:

Նա փորձել է միևնույն տպավորությունն ստեղծել նաև մեր վերականգնած «պարիղովն» բառի կապակցությամբ. «Շատ հեշտ է՝ հենվելով Բարթիկյանի հոդվածում առդեն ուղղածների վրա, հանդես գալ և ասել, թե патилон վրիպակը պետք է սրբագրել паргелий» (149): Որպեսզի մեր ընդգծած արտահայտությունն ընթերցողին չմոլորեցնի՝ հարկավոր է վկայակոչել Բարթիկյանի առաջին հոդվածը և ցույց տալ, որ նա Արատոսին ծանոթ լինելով

¹⁶ Բառաքնություն է նաև չարժիկ կամ օֆից-չիֆ (Р. М. Бартикаян, О двух византийских военных терминах восточного происхождения, ՀՄՄ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1970, № 8, էջ 73—74): Բյուզանդական բանակում գործածված այս զինվորական տերմինի «հայկական ծագումը» ապացուցելու համար Բարթիկյանը վկայակոչել է Աստվածաշունչը և Ոսկերիանի երկի մեկնությունը, չնկատելով, որ սրանք ո՛չ բուն հայկական, ո՛չ էլ զինվորական աղբյուրներ են: Իսկ Անանունը հերքում է Բարթիկյանին, որովհետև «խուզակ» բառը գործածում է ոչ թե որպես զինվորական, այլ՝ մատենագրական տերմին:

(այլ բան է ծանոթ լինելը, այլ բան՝ բառաբանությանը զբաղվելը) հանդերձ՝ չի կոհակ հայերեն տառադարձության սկզբնական ձևի մասին և շարունակել է տպագրել գրչական վրիպակը. «Յորժամ երեւի որ կոչի պատիղովն... Ի հարաւոյ կողմանէ լինի այս պատիղովն» (էջ 347): Ինչպես տեսնում ենք, վրիպակը ոչ միայն կա, այլև կրկնված է:

Բարթիկյանը գրում է. «Մեր հոգվածում գրել ենք, որ չէստու չունարեն նշանակում է մորկահավ, և եթե աշխարհաբար պիտի թարգմանվի, ապա պիտի հայերեն բառը բերվի և ոչ հունարենը՝ հայերեն տառերով գրված» (148): Այս պահանջն անիրագործելի է, որովհետև նախ հոգվածագիրը բառարաններից օգտվելիս չի նկատել, որ չէստու բառի ստույգ իմաստը հայտնի չէ (ուրեմն՝ մենք չէինք կարող որևէ ստույգ իմաստ վերագրել նրան և պետք է թողնեինք կեփիկ տառադարձությունը) և երկրորդ՝ եթե «կեփիկ»-ը թարգմանեինք մորկահավով՝ Բարթիկյանը կհայտնվեր այն անհարմար վիճակում, որ առանց այդ մասին իմանալու՝ մորկահավը դարձրած կլինեի մոտավորապես «մեփկաբզկ»: Սրանում համոզվելու համար՝ մի պահ կատարենք նրա պահանջը և «կեփիկ»-ը փոխարինենք «մորկահավով»: «Եվ այս մորկահավը մի խլիկ թռչնակ է, որը փոքր շնչումից (նվաղագույն քամուց) շարժվում է»: Ինչպես տեսնում ենք, Բարթիկյանի ճանաչած մորկահավը նույնիսկ փոքր շնչումից շարժվում է: Այնինչ՝ մեր ճանաչած մորկահավը փառավոր մի թռչուն է, որը մորիկների հետ է ընկերություն անում...

Բարթիկյանը իր պարտքն է համարել իրենից բացի պաշտպանել նաև «Յաղագս նշանացի» ռուսերեն թարգմանիչներ Ք. Տեր-Դավթյանին և Ս. Ս. Արեշտայանին, բայց տեսեք, թե նա ինչպես է «պաշտպանել»: Նա գրում է. «Հիշածս բառերը թարգմանիչները տառադարձել են՝ հետևյալ կերպ. ПАПОС, ПАТИЛОН, АЛАЛАНЧИ, ОРОШТУЭДЫ... Բայց նրանք այլ բան կարող էին անել, երբ դեռևս հայտնի չէր իրենց թարգմանածի հունարեն բնագիրը» (149): Սրանով նա կարծես թե դիտմամբ՝ ցուցադրել է թարգմանիչների սխալները, որպեսզի նրանց հենքի վրա ստեղծի այն տպավորությունը, թե աշխարհում ամեն ինչ սկսվում է այն պահից, երբ ինքը՝ Բարթիկյանը հրատարակեց Արատոսի հունարեն բնագիրը: Բայց որ իրականում թարգմանիչները կարող էին խուսափել թվարկված սխալներից գոնե մի երկուսից նաև նախքան հունարեն բնագրի հրապարակումը՝ այդ մասին վկայում է հետևյալը. դեռևս 1896 թ. «Բազմավեպի» 251-րդ էջում համադրված են «Յաղագս նշանացի» պապիկ (ռուս. թարգմ. папюс) և Արատոսի չէստու բառերը: Ուրեմն ամեն ինչ Բարթիկյանով չի սկսվում: Ավելին. Բարթիկյանի հրապարակած հունարեն բնագիրը բացառապես ոչ մի որոշակիություն չի ավելացնում «Բազմավեպում» քննված չէստու-ի վրա:

«Բազմավեպի» միևնույն հոգվածում քննարկված է նաև «որոշտուեզ» վրիպակը (ороштуэды), որը, ի դեպ, ոչ մի կապ չունի Արատոսի հետ, որովհետև հունարեն բնագրում իրեն համապատասխանող ոչինչ չկա: Ուրեմն այս դեպքում նույնպես ամեն ինչ Արատոսով չի սկսվում և կարելի էր հենց ըսկզբից էլ կոհակ, որ «որոշտուեզը» վրիպակ է:

Բարթիկյանի ելույթը ավարտվում է Ս. Արեշտայանի պաշտպանությամբ: Ուրեմն մենք էլ այստեղ ավարտենք մեր խոսքը:

О МНИМОМ ПЕРЕВОДЕ ТРУДА АРАТА ИЗ СОЛ

ΔΙΟΣΗΜΕΙΑ

Доктор филол. наук Г. В. АБГАРЯН

(Резюме)

Р. Бартикян высказал мнение («Вестник Матенадарана», № 7), что изданный в 1896 г. в журнале «Арагат» Г. Тер-Мкртчяном текст «Об облаках и знамениях» не что иное, как прозаический перевод Διοσημεία Арата из Сол. Такое мнение вызвано тем, что Бартикяну не было известно исследование О. Торосяна («Базмавеп», 1896), показывающее, что в труде «Об облаках и знамениях» в качестве источников использованы метеорологические сведения Василия Кесарийского, жившего спустя более пятисот лет после Арата.

В нашей статье («Историко-филологический журнал», 1971, № 1) путем сравнения греческого текста Арата с древнеармянским текстом «Об облаках и знамениях» мы показали несостоятельность предположения о тождестве упомянутых сочинений.

Во второй статье Р. Бартикяна («Историко-филологический журнал», 1971, № 4) приводятся несколько отрывков из сочинения Арата и показывается сходство их содержания с содержанием соответствующих мест армянского текста. Однако в статье не представлены те отрывки, которые выявляют неидентичность двух текстов и указывают на общий для обоих текстов источник (Евдокс Книдский).

В подтверждение своего мнения Р. Бартикян ссылается на приписываемые Арату главы греческого оригинала «Геопоник», не ведая, что эти главы не принадлежат перу Арата. Не соответствуют действительности также некоторые ссылки Бартикяна на греческий текст произведения Арата.

В хранящейся в Матенадаране им. Маштоца рукописи № 1973 нами обнаружены новые материалы, доказывающие, что в средневековой Армении на армянский язык была переведена не только часть не дошедшего до нас греческого оригинала труда Евдокса Книдского, включенная в качестве источника в «Облака и знамения», а переведен был весь труд полностью.